# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 2

## «ԵՔԼ ՇՀԱՊՁԲ 17/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

29 Նոյեմբերի 2016թ.
ժամը 10:00

| | |
|---|---|
| Մասնակցում էին՝ | |
| Հանձնաժողովի նախագահ | Վ. Հարությունյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ն. Նելքումովա |
| | Ա. Անանյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մինասյան: |

### Օրենքով սահմանված կարգով գնման ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին

---

(Ա. Անանյան)

1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը 2016թ-ի նոյեմբերի 29-ին ժամը 10:00-ին բացվել են «Երքաղլույս» ՓԲԸ-ի կենտրոնական գրասենյակում՝ ք. Երևան, Բուզանդի 1/4 հասցեում:

2. Օրենսդրությամբ և ընթացակարգի հրավերով սահմանված կարգով գնային առաջարկ պարունակող ծրարներ կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| | | |
|---|---|---|
| 1 | «ՖԼԵՇ» ՍՊԸ | ք. Երևան, Ե. Կողբացու 30, հեռ. 010 53-42-33,<br>էլ. փոստ flash@flashltd.am, |
| 2 | «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ | ք. Երևան, Պուշկինի 1, հեռ. 010 54-09-11<br>էլ. փոստ cpsarmenia@gmail.com, |
| 3 | «ՄԱՔՍՀՈՒՐ» ՍՊԸ | ք. Երևան, Տպագրիչների 8, հեռ. 010 52-67-51<br>էլ. փոստ maxhur.tender@mail.ru, |

Հրավերն էլեկտրոնային եղանակով ուղարկվել է շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, սակայն 2-րդ կետում նշված մասնակիցներից բացի այլ մասնակիցներ հայտեր չեն ներկայացրել.

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

3. Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում ընթացակարգի հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են և համապատասխանում են սահմանված պահանջներին.

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

4. Բոլոր մասնակիցների կողմից գնային առաջարկները կազմված և ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան.

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

5. 2-րդ չափաբաժնի (Ավտոմոբիլային դիզելային վառելիք) մասով «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի, «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ի և «ՄԱՔՍՀՈՒՐ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային արժեքը, ուստի 2-րդ չափաբաժնով հայտ ներկայացրած մասնակիցներին «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին, «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ին, «ՄԱՔՍՀՈՒՐ» ՍՊԸ-ին, գների նվազեցման համար հրավիրել միաժամանակյա բանակցությունների, որի անցկացման համար սահմանել օր՝ 2016թ-ի դեկտեմբերի 02-ին ժամը 10:00-ն, ք. Երևան, Բուզանդի 1/4 հասցեում տեղակայված կենտրոնական գրասենյակում:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ-ի դեկտեմբերի 02-ին ժամը 10:00-ին, վերը նշված հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի՝
Նախագահ — Վ. Հարությունյան

Անդամներ՝ — Ն. Մելքումովա
Ա. Անանյան

Քարտուղար՝ — Ա. Մինասյան